

U. S. S. R. / 1911


U. S. S. R.

U. S. S. R. 1911

891-71-15

U-43

Ա. ՍԵՐԱՓԻՄՕՎԻԶ



# Կ Ա Թ Ի Լ Ը

(Պատկերազարդ).

№ 11

Թարգմ. Կ. Միրիանեան.

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Հեթմոն» Գրաֆսկայեա փող. 6.

1911

Հոկտեմբեր 1911



1500

30 MAY 2011

ԻՄ ԳՐԱԴ

Ա. ՍԵՐԱՓԻՄՈՎԻՉ

# Կ Ա Ք Ի Լ Ը

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ)

Թարգմ. Կար. Միրիանյան

№ 11



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆսկայնա փող. 6

1911

Գրքը մեկ կողմ

OK



30 JUL 2010

3094

30


### Կ Ա Թ Ի Լ Ը

Խրոխտ ու վեհապանձ կանգնած էր մի հրակայ քարաժայռ: Նրա բարձունքներին յաւերժական ձիւն կար դիզւած: Ու անշարժ նստած էր նա, այդ ձիւնը դարերից ի վեր մեռելային սառնութեամբ պատած: Բայց ամեն անգամ, երբ ծագում էր արևը և տաքացնում քարաժայռի բարձունքները, ձիւնի հատիկները հալում էին, և նրանց փայլուն կաթիլները, թափանցիկ ու յըստակ, սահում էին դէպի գահավէժի եզրը, ձօձւում էին քամուց, դողդողում մի վայրկեան՝ իրենց մէջ ցոլացնելով առշուր ծաւալող չքնաղ աշխարհը—կապուտակ երկինքը, լեռները, կիրճերը, անտառներն ու հովիտները, որոնք բոլորը պարուրւած էին մանիշակագոյն ծխով: Ե՛ւ այդ ծխի միջով երևում էին արտեր, արօտներ, հօտեր, իսկ հեռում հազիւ հազ նշմարւող մարդկային բնակութիւններ:



1046  
41





Եւ կաթիլը ուրախ ու յուզւած, հէնց որ մեծանում, ծանրանում էր, կտրւում, թռչում էր ցած շողշողալով ծիածանի բոլոր գոյներով: Չահել էր նա, այդ կաթիլը, և բուռն փափագում էր երջանիկ լինել. ու թռչում էր նա, որ ուրիշներին էլ երջանիկ դարձնի, և արար աշխարհը չքնաղ էր թւում նրան:

Յածը, ուր թռչում էր նա, մխում էին մէգերը, ծածանւում էր մառախուղը և ծաւալւում էր խուլ կիրճերի խոնաւութիւնը: Բայց նրան թրւում էր, որ ինքը յաւերժօրէն թռչելու է սեպած, դէպի վեր ձգտող ժայռերի, կանաչ մամուռների, մութ ճեղքւածների մօտով, որոնց միջից տեղ-տեղ, որպէս իրարու գալարւած օձեր, կախկիւսել էին բոյսերի արմատները:

Գագաթը հեռոցհեռէ մնում էր վերևը, իսկ այն բոլորը, ինչ որ գտնւում էր ներքևում, աւելի ու աւելի պարզ, որոշ էր գծագրւում: Արդէն լաւ կարելի էր դիտել անտառապատ զառիվայր լեռների առանձին ծառերը և հովիտներում սպիտակին տւող մարդկային տնակները. իսկ ցանքսերը և նրանց մօտերքը հովիւների նսկողութեան ներ-



քոյ թափառող նախիրը դեղնին էին տալիս, որ-  
պէս երկայն քառանկիւնիներ:

Բայց տխուր տեսարան էր: Արար խամրել  
էր շոգից և նրա փուշ հասկերի չոր ու դատարկ  
ծղնօտները սլսրում էին ցաւալի կերպով. նա-  
խիրը կորիզուիս թափառում էր տոչորւած  
արօտներում, և մարդիկ ախուր էին ու անհամ-  
բիւր: Չուր չկար: Երբեմն սարից իջնում էր մի  
աղմկալից վտակ ու ոռոգում ամբողջ հովիտը,  
բայց շատ տարիներ առաջ ժայռի մի անագին  
բեկոր կախել էր նրա հունը, և շուրը մասամբ  
ցրւում էր ճեղքւածքների մէջ, մասամբ էլ ըն-  
թացքը փոխելով հոսում էր լեռան մի այլ  
լանջով: Եւ այն օրից երաշտն ու ծարաւը տի-  
րեց այստեղ, ներքեում:

— Կթռչեմ — ասում էր կաթիլն ինքն իրեն, —  
կթռչեմ այնտեղ, լուսափայլ շաղ դստած  
կընկնեմ ծաղկի բաժակը, կամ կթափանցեմ ցո-  
րենի հասկի մէջ, կզովագնեմ նրանց, և նրանք  
կուրախանան, ու մարդիկ կօրհնեն ինձ, կեր-  
ջանկացնեն նրանց բոլորին և ինքս էլ բերկրանք  
ու վայելք կզգամ:

Այսպէս էր մտածում կաթիլը և ուրախ գլարթ  
թռչում էր աւելի արագ. անա երևաց մի ժայռոտ  
հարթութիւն, կաթիլը զարնեց հարթ քարի և  
ցրիւ եկաւ, որպէս վայր ընկած արցունքը:

Այնքան անսպասելի էր այդ բանը, որ ամեն  
ինչ իրար անցաւ ու խառնեց նրա շուրջը:

— Վահ, սա ի՞նչ բան է, — ասաւ նա մի  
քանի վայրկեանից յետոյ, — այս ի՞նչ պատահեց:

Մոխրադոյն ժայռերը, գրանիտի շեղջակոյ-  
տերը կանգնած էին հզօր ու անշարժ: Վայրի  
ու ամայի էր շրջակայքը: Չէր երևում ո՛չ ան-  
տառ, ո՛չ հովիտ, ոչ էլ մարդկային բնակութիւն.  
նոյն իսկ միզապատ կիրճերը գտնւում էին հեռու՝  
ներքեում: Միայն սառը քարի վրայ երևում էր  
ցրիւ եկած մի թաց բիժ՝ այն ծխածանաշող զը-  
ւարթ կաթիլի փոխարէն:

— Այս ի՞նչ եղաւ: Ո՞ւր կորան երջանկութեանս  
ոյժն ու անուրջները: Ինչո՞ւ էր տաքացնում  
արևը, ինչո՞ւ ծնւեցի ես: Ա՛խ ինչպէս ուզում  
եմ ապրել, ինչպէս կամենում եմ ետ դարձնել  
անցեալս. ուրախ ու յուզումալից անցեալս: Ան-  
ցան բոլորը, անցան գնացին...



Եւ ապրում էր նա ու կրծող, սպանիչ թա-  
խիծն էլ ապրում էր նրա մէջ:

Ու անշարժ, իրարու դիզած կանգնած էին  
քարէ շեղձակոյտերը:

— Երկար ու ձիգ տարիներից ի վեր կանգ-  
նած ենք այստեղ ու մեր հուժկու ծանրու-  
թեան տակ ճնշում ենք լեռնալանջերը. և չկայ  
մարդկային մի ոյժ, որ կարողանայ տատանել  
մեզ, ու այսպէս անշարժ, անսասան կմնանք  
բանի գոյութիւն կունենայ արար աշխարհը: Ո՞ւր  
էիր թռչում դու, տխմար, ինչո՞ւ ընկար այստեղ:  
Դէ գնա, տեղդ է:

— Արարիչ Աստուծ, գոնէ շունչս առնէիր...

Արևը բարձրացաւ, անցաւ սարի միւս կողմը  
և սուերը գցեց հակադիր կողմը: Կիզիչ ճառա-  
գայթներն ընկան այն ամայի քարի վրայ և...  
կաթիլը գոլորշիացաւ:

Իսկ արևը հետզհետէ բարձրանում էր վեր  
և էլ աւելի տաքացնում քարաժայռի բարձունքը:  
Ձիւնի հատիկները հալում էին ու ցած ընկնում  
լուսափայլ կաթիլներով: Իւրաքանչիւր կաթիլը  
կամենում էր թռչել դէպի այն հովիտը, որ ե-

րևում էր ցածը, հեռում, բայց ընկնում էր  
ճանապարհին գտնուող լերկ ժայռերի վրայ, և  
ցրւում, մեռնում էր, ինչպէս այն կաթիլը:

II

Աշունն եկաւ:

Անտառները ծիրանի գոյներ առան, սաղար-  
թը սկսեց թափւել, և հեռում, մերկացած ծա-  
ռերի միջով կարելի էր տեսնել անցնող դարձող  
մարդկանց ու գազանների: Առաւօտները լճակ-  
ների երեսը ծածկւում էր երկար սաղաձև բիւ-  
րեղներով: Օդը թափանցիկ էր, և հեռուոր լեռ-  
ների ուրևագծերը երևում էին պարզորոշ կերպով:

Արևն արդէն աւելի թոյլ էր տաքացնում, և  
բարձունքում դիզած ձիւնը աւելի քիչ էր հալ-  
ւում: Սակայն այնտեղ, ուր շարունակ, իրարու  
ետևից ընկնում ու մեռնում էին կաթիլները,  
գոյացել էր աչքով աննշմարելի մի փոքրիկ ճեղք:

— Է՛հ, ինչ կայ որ, — մտածում էր քարը, —  
ինչ փրաս սրանից:

Սառնամանիքը սկսեց և թեթև կերպով  
սառցրեց ջուրը: Հետևեալ օրը սառնամանիքը



սաստկացաւ, և ժայռի մէջ եղած սառույցը լայնացաւ, չնայած իր ցոյց տւած խիստ ընդդիմադրութեան, անշարժ գրանիտէ զանգւածը տեղի տւաւ, և մի պատուածք ակօսեց ամբողջ ժայռը վերից վար:

Ծանր հարւած անցաւ լեռան միջով և հիւքից սասանեց նրան, ու հնչեց բոլոր ժայռերում և կիրճի մէջ.

— Լսում էք... լսում էք... լսում էք...

— Հն, հն, հն, հն, հն... — արձագանք արւեց ամեն կողմից:


Ու երկար ժամանակ չկարողացան նրանք հանդարտել, իսկ արձագանքը տեղից տեղ էր անցնում կրկնելով ու մարելով:

Մարդիկ գլուխները բարձրացրին, նայեցին լեռնիվեր ու ասին.

— Ինչ որ բան է կատարւում վերևում:

Իսկ վերևում ժայռը երկու մասի էր եղել, այդ պատուածքից բարակ ճեղքւածներ էին տարածւել ամենուրեք:

— Ո՛չ, այսպէս չի լինիլ, — մտածում էր հրակայ ժայռը, — պէտք է մի ճար գտնել:





Եւ նա սկսեց պատուածքը լցնել քարով, խճով և յղկած, մաշած կրաքարով. ու լեռնափլւածքներն ուղղեցին դէպի այն կողմը և ծայրէ ծայր լցրին պատուածքը:

— Կնատի, կպնդանայ, և դարձեալ նախկին ժայռը կլինեմ,—մտածում էր նա և շարունակում էր առաջւայ պէս մոայլ, մենտոր և անշարժ մնալ՝ սպասելով ձիւն ձմռան:

Եկաւ ձմեռը, և կատաղի պտոյտներ գործելով սկսեցին ոռնալ մրրիկները:

Գիշեր ցերեկ ձիւն էր գալիս, և ամեն տեղ, ուր պատուածք, խոռոչ ու փոս կար, զիղւում էին ձիւնակոյտեր, որոնք ամեն ինչ ծածկում, հաւասարեցնում էին. հողմածեծ լերկ ժայռերն էին միայն, որ տխուր ու անպտուղ ցցւած էին ձիւնապատ դաշտերում:

Մեռելութիւն ու ամայութիւն էր իշխում չորս կողմը. այլևս ոչ ոք չէր մտածում ապագայի ու երջանկութեան մասին, ոչ ոք չէր մտաբերում և անցեալը. մինչև անգամ թռչուններն ու զագանները ցած էին իջել սոճիների, եղևինների ու թփերի աշխարհը: Իսկ բարձրը,

վերևում, անօսրացած տարածութեան մէջ, ուր յաւերժական ցուրտն է թագաւորում, առաջւայ պէս անտարբեր լողում էին փետրածև ամպերը, բարակ սառցէ բիւրեղներից կազմած:

Մի անգամ փետրածև ամպերը, որ սառնամանիքների ճշգրիտ գուշակ են հանդիսացել միշտ, ցած իջան և սկսեցին կապտին տալ: Երկիրը տաքացաւ: Մէկ ու գոլորշի էր բարձրանում նրանից:

Փչում էր հարաւային քամին, եղանակը գնալով տաքանում էր: Փխրուն դառան ձիւնակոյտերը և հուժկու ծանրութեամբ իջան, նստեցին: Նրանց միջով սկսեց հոսել երեսանց հալւած ջուրը, անթիւ, անհամար անցքեր բաց աւրաւ նա, վազեց ժայռի ճեղքերի միջով ու ամեն ուղղութեամբ խոխոջացին անտեսանելի առւակներ:

III

Մեռած ձիւններն ու համր, անշարժ ժայռերը, որ կախկիւած էին ամենուրեք, կասկածով ու թշնամութեամբ էին նայում վերածննդ կեանքին: Իսկ երբ գարնան տաք, կենսաբար շունչը



բուրեց, ժայռերը մռայլեցին, ու սպիտակին էին տալիս նրանց ձնալից պատուածքները:

Փխրուն ձիւնը սկսեց փափախների նման դիզուել, թեք ընկնելով ու կախկիւտելով դահա՝ վէժերից: Իսկ թուխպերը բարդ-բարդ կիտուում էին լեռան գագաթին: Եւ եթէ մէկը նայէր լեռնիվեր, կհասկանար, որ ինչ որ չարիք է նիւթուում, ինչ որ ահարկու բան է պատրաստուում այնտեղ, վերևում: Բայց ոչ ոք չէր նայում այնտեղ, լեռնիվեր:

Ահա մինչև գէնիթն ելաւ արևը, և երկիրը տաքացաւ: Աւելի ևս թեքեցին ձիւնի շերտերը և չկարողանալով կախած մնալ, փուլ եկան, իրենց հետ քաշ տալով ժայռերի փլածքներ, գրանիտի բեկորներ, խճեր ու սառցադաշտերից մաշած կրաքարեր:

Հսկայ ժայռի նման ցած գլորեց այդ ձիւնակոյտը. մի քանի անգամ դարձաւ օդի մէջ և, իր ետևից լայն հետք թողնելով, խլացուցիչ դղըրդիւնով փուլ եկաւ, և միայն ձիւնի մի ամպ բարձրացաւ ընկած տեղից: Սասանեցին դարաւոր սոճիները, հին ասղատերևը թափւեց ձիւղերից,

հեռաւոր գագաթների վրայից ծանր ու մեծ վերելան արժիւնները, իսկ երկու որսորդ, որ մագլցելով բարձրանում էին յաւերժական ձիւնի զծի մօտով, վայր գլորեցին լեռնադաշտի դահավէժից:

Թագնւեց հոսող ջուրը, ծծւեց փլածքի մէջ և աղմկալից ու զւարթ աուակ դառնալով վագեց ցած՝ հալուող ձիւն տանելով իր հետ. ու վտակը վարարելով հալուող ձիւնից, հեղեղեց հովիտը և յագեցրեց պապակւած երկիրը, որը ազահաբար սկսեց կլանել առատ խոնաւութիւնը:

Ամեն ինչ զուգուեց կանաչով: Ամեն տեղ արթնացաւ կեանքը: Բայց կաթիլները, այն առաջին կաթիլները, որ ընկան լերկ քարի վրայ, չտեսան այս արթնացող կեանքը, չլսեցին նրա արթնացած ձայները, ու անյիշատակ կորան նրանց անունները:









«ԻՄ ԳՐԱԴԱՐԱՆԸ»

Հրատ. «ԶՈՐՍ ԲՈՅՐԻ»

Լոյս են տեսել

- № 1 «Տէրտէրն ու իր Բաղդի ծառան» . . . . . 1
- № 2 «Եսասէր Հական» Բ. ապ. պատկերազարդ . . . . . 1
- № 3 «Գող մաքին» (պատկերազարդ) . . . . . 1
- № 4 «Կարմրավզիկ» . . . . . 1
- № 5 «Ողորմած թշնամու աղբիւր».— Սոխակի  
կրգը . . . . . 1
- № 6 «Երկու առակ» . . . . . 1
- № 7 «Զարմանալի որդ» (պատկերազարդ) . . . . . 2
- № 8 «Վայրի կարագնէր» . . . . . 1
- № 9 «Բարեսիրտ Գողիաթը» . . . . . 1
- № 10 «Ա.քւա».— «Առաջին Զնծաղիկներ» . . . . . 1
- № 11 «Կաթիլը» (պատկերազարդ) . . . . . 1

Գրմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „ТИН  
Седраку Аветянъ“

~~891.71.93~~

~~0-45~~

«Ազգային գրադարան»



NL0387698



5094